

Լեւոն՝ մերժեալ՝ իմանէ, որպէս եւ էր մերժեալ յիւրոյ իսկ բնիկ աթոռոյն յԱնտիոքէ, մախանօք հակառակորդին իւրոյ Պեմունդի. եւ մինչ ջանայր վերադառնալ՝ ինոյն՝ օժանդակութեամբ գահուն Հոովմայ, լուեալ զմահ Լեւոնի, միւս եւս անխոհական խորհրդով, մինչ յայտնապէս գիտէր զյետին կտակ նորին, համարձակեցաւ բռնաբարել զբաղդն կորուսեալ: Եւ ոչ նա միայն փառասէր խորհրդովն բորբոքէր, այլ հասարակաց իմն մոլութիւն էր իշխանաց ժամանակին՝ ձկտիլ՝ իբարձունս, մանաւանդ եթէ դոյզն ինչ փաստ ումէք գոյր ժառանգութեան կամ խնամութեան. եւ առ այս զմիմեամբ ելանէին՝ կին ածել զդստերս եւ զայրիացեալ կանայս իշխանագանց եւ տեարց վիճակաց, բազում անգամ ոչ խտրելով ոչ զհասակ եւ ոչ զայլ պատշաճս: Որպէս այժմիկ եւ Ջօֆրէ տէրն Սարունդիքարի, թերեւս գաղտնի յուսով գահերիցութեան՝ իշխէր խնդրել յիւր կնութիւն՝ զԼեւոնի իսկ թագուհին զՍիպիլ, որ էր տակաւին մանկամարդ իբր քսան եւ մի ամաց. այլ հեռատեսն Կոստանդին մերժեաց իսպառ զայնպիսի խնդիր՝ որ զԱդոնիային բերէր առ Սոմնացին Արիսակ: Յանդգնագոյն եւս գտաւ մարաջախտն Հայոց Վահրամ՝ Կոփրետայ որդին, տէրն Կոռիկոսի. խնդրեաց սա՝ իՌուբինէ զմայր նորին Ալիծ, որ էր յայնժամ իբր քառասնամեայ, խոստացեալ օգնական լինել նմա՝ իթելարկութիւն թագաւորութեան Հայոց. եւ արար այնպէս: Բայց Ռուբինի կամելով հաստ առնել զթիկունսն՝ թախանձէր զիկաթ Քահանայապետին, մինչ տակաւին՝ իպաշարման Տամիադայ նստէին, ձեռն տալ ինքեան իբրեւ վաղագոյն ժառանգ կարգեցելոյ՝ Լեւոնէ. եւ Պեղագիոսի անտեղեակ գոլով եղելոցն՝ իսկզբանէ՝ ոչ գտանէր անհաւան, այլ եւ գրէր առ Հայս ընդունել զնա: Ոչ եւ այսու շատացեալ Ռուբինի՝ եգիտ սինլքորս ոմանս, եւ գունդ կազմեալ եմուտ՝ ի Կիլիկիա, եւ հրաւիրեալ զհամախոհ իւր Վահրամ, որսացան՝ իմիաբանութիւն իւրեանց եւ զՅոյնս՝ որք՝ իՏարսոն մեծ մասն բնակչացն էին, եւ կալան զքաղաքն զայն մեծ եւ զբերդն որ՝ ինմին. եւ գումարեալ մարտիկս հինգ հազար, կամէին յեղակարծումն ժամու անկանել՝ իվերայ արքունական քաղաքին եւ տիրանալ գահուն: Գուժկան եհաս առ Պայլն Կոստանդին՝ մինչ կայրն անդ անկասկած. եւ ոչ գիտելով զթիւ համարոյ ապստամբացն՝ ել՝ իՍսոյ երեքհարիւր արամբք պատահել նոցա. դիմեալ՝ ի Մամեստիա՝ ուր համարէր գտանել զնոսա՝ եւ ոչ հանդիպեալ, յառաջեաց երթալ յԱտանա. եւ ահա ընդ առաջ ել նմա ստուար գունդ ապստամբացն. զորոց տեսեալ զբազմութիւն՝ սկսան զանգիտել որք ընդ իւրն էին. այլ նա՝